



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

4387

83  
 $\geq -47$

930 2

Հովհաննես Ռ. Արշակունյաց  
83 1928 04 28 JUN 2005  
Հ-47 20 OCT 2009  
Ե. ՀԵՐՔԱՐՏ


ՅՈՒԴԱՅԻ ՎԵՐՁԻՆ ԳԻՇԵՐԸ

ԹԱՐԳՄԱՆԵՑ

ԽԱԶԱՏՈՒՐ ՔԱԶ. ՓԱՆԵԱՆՑ

(Արտապաժ և ուրախութեաց լրագրից:)

1452



11.06.2013

4387

230

## ՅՈՒԴԱՅԻ ՎԵՐՋԻՆ ԳԻՂԵՐԸ

կ. ՀԵԲՇԵՐՑի

Յուղան երկար անշարժ կանգնած էր այն-  
տեղ, ուր մահացու համբոյրը տուաւ Յիսու-  
սին։ Նա հայեացքով հետեւում էր այն խմբին,  
որը մարդոյ Որդուն քաշքչելով տանում էր դէ-  
պի Երուսաղէմ։ Լապտերների և կերոնների ա-  
րիւնաներկ լուսոյ հետ միասին տէզերով ու  
մերկացած սրերով այդ տիսուր թափորը լուռ  
և շտապ անհետացաւ հեռւում... նա անհետա-  
նում էր և անհետացաւ, որպէս գիշերային ա-  
ւազակների հրոսակ։ Եյն ժամանակ Յուղան  
հանդարտութեամբ փաթաթուեցաւ իւր վերար-  
կուի մէջ և երեսը դարձնելով դէպի քաղաք՝  
սպասում էր։

Կէս գիշերից անց էր։ Լուսինն իւր կա-  
պոյտ գոյնով լուսաւորում էր անքերրի դաշտե-  
րը, քաղաքի աշտարակներն ու ամրութիւնները։  
Մի խառն և ահարկու աղաղակ քարձանում  
էր վեր և դէպի տաճարի հրապարակը։ Մեա-  
պատում հնչում էին բուերի շարագուշակ ձայ-  
ները։ Մի ահագին շղիկ իւր պաղ թեռվ պինդ

Дозволено Ценз. Тифлисъ 7 Июля 1901 года.

366 - 94+

գիպաւ Յուդայի այտերին: Նա երեսը ծածկեց  
վերաբերուի փեշի մէջ:

Նա տակաւին սպասում էր: Բայց ահա  
յանկարծ ուրախութիւնից յուզուած՝ նա երեսը  
դարձրեց դէպի այգու մուտքը, դուրս եկաւ  
ստուերից և վաղեց ընդառաջել մի մարդու,  
որը, կարծես, Գեթսեմանի խաւարի մէջ որո-  
նում էր մէկին: Դա մի ծերունի հրեայ էր, եր-  
կար սպիտակ մօրուքով, կորացած մէջքով, յեն-  
ուած փայտին: Դա քահանայապետի գանձա-  
պահն էր, որ անհաստատ քայլերով առաջ էր  
գալիս: Յուդան մօտեցաւ նրան: Գանձապահը  
շպրտեց դէպի Յուդան մի կաշուէ քսակ և ապա  
արագ քայլերով հեռացաւ նրանից:

— Նոյն իսկ պիղդ շան առաջը ոսկորն  
աւելի քաղաքավարի են գցում. ինքն իրեն մլրժ-  
մթաց Յուդան:

Նա վեր առաւ քսակը և ժպտաց: Քսակը  
ծանր էր և փողերի զնզգնգոցը շատ քաղցր ու  
ախորժելի էր հնչում: Նրա ականջին: Յուդան  
դուրս վաղեց մացառներից և քսակը բաց ա-  
րաւ լուսնի լուսոյ առաջ: Առաջին իսկ վայր-  
կեանին արծաթի փայլը կարծես կուրացրեց  
նրան: Բայց շուտով ձեռք դարձեց համարել փո-  
ղերը, նրանց իւրաքանչիւրի կշիռը փորձում էր  
իւր աջ ձեռքի բռան վրայ և երկար անհան-

գնուութեամբ նայում էր մի հատ զրամի, որի  
վրայ կայսեր սպատկերը փոքրինչ եղծուած էր:  
— Սա Օգոստոսինն է, ասաց նա, հան-  
գուցեալ կայսերը: Ես գերազասում եմ ուրիշ  
գրամներից ծիրերիստինը, նրանք բոլորովին  
նոր են: Քահանաներն իրենց խոստումը կա-  
տարեցին: Այդ լաւ է:

Նա թագցրեց քսակը գոտու մէջ և ուղե-  
ւորուեց դէպի Երուսաղէմ: Նա իրեն թեթև էր  
զգում, նա իրեն երջանիկ էր համարում: Խիղ-  
ճը հանգստացնելու համար նա սկսեց մտաքե-  
րել մատնութեան զիշերը Կայիշափայի տուած  
նենզաւոր յորդորները: 2Է որ նա մատնել էր  
այն մարդարէին, որը նախազուշակել էր օրէն-  
քի կործանումը և արհամարհել էր Մովսէսին.  
ՀԷ որ մատնել էր Խորայէլի սուտ թագաւորին,  
կեղծ մեսիային, որն արտաքսում էր վաճառա-  
կաններին Սողոմոնի տաճարից և փակում էր  
երկնքի արքայութիւնը հարուստների առաջ:  
Նա, այդ պարկեցտ Խոկարիսվացին փառաւոր  
կերպով վրէժինդիր եղաւ և՛ Աստուծոյ, և՛ Թաւ-  
թի և՛ Հոռովմի փոխարէն: Եւ հէնց այն միե-  
նոյն օրը, երբ տեղի կունենար Քրիստոսի շար-  
շարանքը, Աստուծոյ ընտրեալները դևտացիք,  
սադրւկեցիք, դպիրները, փարիսեցիները և Պի-  
ղատոսը, կայսեր այդ հպարտ փոխանորդը, պի-

տի շնորհաւորէին և փառաբանէին նրան իւր  
կատարած սխրագործութեան համար:

—Եմ անունը, մտածում էր նա, նոյնքան  
երկար պիտի ապրէ, որպէս Յակովի, Դանիէլի  
և Եղիալի անունները:

Նա մտաւ խաղաղ և մռայլապատ քաղաքը,  
մտածելով որ հէնց այդ ժամին Կայիափան  
հարց ու փորձ է անում Յիսուսին, նա ուզնոր-  
ուեց դէպի քահանայապետի ապարանքը: Հե-  
ռուից նա նշմարեց լուսաւորուած պատուհան-  
ներ. ճեմիլիքների վրայ սիւնազարդ պատշզամ-  
բի երկայնութեամբ յետ ու առաջ շարժում  
էին ստուերներ: Առաջին բակի վրայ մի կար-  
մրագոյն լոյս էր երկում: Փողոցը ամայացած  
էր: Հաւը խօսեցաւ:

—Մօտ է լուսաբացը, ասաց Յուղան:

Նա կանգ առաւ դռների առաջ: Բակի  
մէջ տեղում բորբոքում էր խարոյկը: Յիսուսի  
տասներկու աշակերտներից մինը՝ Պետրոսը նըս-  
տած էր նստարանի վրայ և տարացնում էր  
ձեռքերը՝ խօսակցելով մի դեռահաս աղախնու  
հետ: Հստ երևոյթին՝ Պետրոսը սաստիկ յուղ-  
ուած էր ու դժբաղդ էր: Նա խօսում էր բարձր  
և ասաց դեռահաս օրիորդին.

—Ճշմարիտ, երգում եմ, ոչ, ես այդ մար-  
դուն չեմ ճանաշում:

Հաւը կրկին խօսեցաւ:  
Սզախինը գնաց: Պետրոսը լռեց և խորա-  
սուզուեց տիուր մտածութեան մէջ: Նա չնկա-  
տեց, թէ Յուղան ինչպէս մօտեցաւ խարոյկին:  
Կայիափայի ծողովարանից խուլ աղաղակ էր  
լսում, որն ընդհատում էր լռութեան երկար  
ընդմիջումներով: Մերթ լսում էին սպառնա-  
լից և արհամարհական ձայնի հնչիւններ, մերթ  
լուրջ ու համառօտ ճառախօսութիւններ, որոնք  
հարկադրում էին Գալիլիայի ձկնորսին և սար-  
սափիլ, և մանկան պէս լալ. Նա մտածում էր,  
որ բակում ինքը մենակ է:

Եւ ահա երրորդ անգամ հաւը խօսեցաւ:

Պետրոսը սարսուեց, մի զարհուրելի ձայն  
արձակեց. զլուխը բարձրացրեց և կանգնեց: Եւ  
երկու առաջեալները՝ ուրացողն ու մատնիչը  
յանկարծ դէմ առ դէմ եկան իրար: Բայց Պետ-  
րոսի հայեացըն այնքան զարհուրելի էր, նա  
այնքան վճռողաբար բռնել էր սուրբ, որ Յու-  
ղան երկիւղից դողալով՝ յետ քաշուեց դէպի քա-  
հանայապետի դուռը:

Երկար թափառում էր Յուղան տաճարի  
շուրջը, որի շրջապատը բացւում էր միայն արե-  
ւածադին: Նա հէնց այժմ կամեցաւ շինութեան  
արտաքին սրահում ընտրել իւր համար մի տեղ,  
ուր նա կըբանար ոսկէվաճառի խանութը: Քա-

հանաներն, ի հարկէ, նրան յարմար տեղ կը-  
տային, և շուտով Եղիպտոսի, Յունաստանի,  
Իտալիայի և Սսիայի գեղեցիկ դրամներն իւր  
ծեռքերի մէջ պիտի խաղացնէր։ Այն ժամա-  
նակ նա պէտք է ծիծաղէր այս քաղցած թա-  
փառականների՝ աղքատութեան և ապաշխա-  
րութեան այս սիրահարների վրայ, իւր վաղե-  
մի աղքատ ընկերակիցների վրայ, այն մարդու  
աշակերտների վրայ, որը պէտք է մեռնէր։ Ար-  
դէն մի քանի պետացիներ, Ռաբբու հսկողու-  
թեամբ, բաց արին տաճարի վանդակները։ Յու-  
դան մօտեցաւ նրանց այնպիսի հաստատ քայ-  
լերով, ժպտալով և ձեռքի այնպիսի հեղահմ-  
րոյր շարժումով, որ կարծես իւր սեպհական  
տունն է մտնում։ Բայց քահանան յօնքերը կի-  
տեց, ձեռքը պարզեց և նրա ճանապարհը կըտ-  
րելով՝ ասաց.—Կանզնիր և հեռացիր... Օրէնքն  
արգելում է անմաքուրին մտնել սուրբ յարկի  
տակ։ Հեռացիր։ Այս գիշեր քեզ յանձնեցին  
երեսուն արծաթը՝ այն արեան գինը. քո աշ-  
խատութիւնը վարձատրուած է։ Հեռացիր, եթէ  
ոչ ես քեզ կարտարսեմ իրին չնացող պոռնկի,  
իրին հեթանոսի կամ իրին մարդասպանի։

—∞—

Յուդան հեռացաւ տաճարից։ Այս անգամ  
նա ուղևորուեց դէպի Պիգատոսի Ստեանը։  
Հռովմայեցիք քահանաներից աւելի քաղցր կը  
վերաբերուին դէպի իրեն, նրանք կըպաշտպա-  
նեն իրեն ծերակոյտի չարամտութիւնից։ Այդ  
ըաբունիները մոլեռանդներ են, որոնց նա ուղ-  
ղակի խղճում է։ Նա գիտէ, որ Ղեիի սերուն-  
դը իւր հոգոյ խորքում շարունակում է երկըր-  
պակել ոսկէ հորթին, ինչպէս և Մովսիսի ժա-  
մանակներումը։ Երբ նրանք կըտեսնեն, թէ ինչ-  
պէս իսկարիտվացին, փոխարքայի այդ հովա-  
նաւորեալը, կայսեր շնորհներով առատօքէն  
պարզեատրուած՝ մեծամեծ հարստութիւններ  
ձեռք կըբերէ, իւր վաճառատները կըլցնէ ոս-  
կով և մետաքսեայ զործուածքներով, փղոսկ-  
րով, թանկազին բարերով, ասիական անուշա-  
հոտութիւններով և թէ ինչպէս նա թանկ գնուի  
կըվաճառէ այդ ամենը չռովմի վրայ, — այն ժա-  
մանակ կըյարկեն իրեն, կըշողոքորթեն իրեն,  
իւրաքանչիւր օր կըծխեն նրա ոտների առաջ այն  
խունկը, որ վերապահուած է միայն Եհովային։  
Եւ ուրախացած իւր հսկարտ և անյագ  
ցնորքներով՝ Յուդան ամբողջ ճանապարհին իւր  
վստահ հայեացքներով պատասխանում էք ծե-  
րակոյտի անդամների, դպիրների և փարիսե-  
ցիների արհամարհական հետաքրքրութեանը,

որոնք հեռուից մատնանիշ էին անում նրան, բայց ի մօտոյ տհաճութեամբ խոյս էին տալիս նրա ստուերից, որպէս մի պղծութիւնից: Յուդան հրապուրուելով ամբոխի մեծագոչ աղաղակներից՝ արագացրեց իւր քայլերը և երբ շըրջեց միւս փողոցը, պատահեցաւ մի քստմնելի տեսարանի:

Սանձարձակ ամբոխը բազիսում էր Պիղատոսի ապարանքի պատը: Երուսաղէմի և հրէից խաժամուժ ամբոխը՝—աւագակները, անառակ կանայք, երգմազանցները, կեղծ դրամահատները, մարդասպաններն ու յանցաւորները՝ գուրս գալով իրենց աւազականոցներից, — նրանք ամենքը բարկացկու աշքերով պարզել էին իրենց ձեռքերը դէպի չոռվմայեցւոց գլխաւորը և աղաղակում էին.

—Բարաբրային, Բարաբրային, տուր մեզ Բարաբրային:

Պիղատոսը շրջապատուած իւր պալատականներով և քահանայապետներով՝ գլխաբաց կանգնած էր ապարանքի ծիրանագոյն սիւնազարդ սրահի մէջ տեղը: Նա հազած էր հռովմայեցու սպիտակ վերարկու և ամբոխին ուղղում էր խօսքեր, որոնց Յուդան լսել չկարողացաւ: Եւ ամեն անգամ, երբ հռովմայեցւոց գըլխաւորը բաց էր անում իւր բերանը, այդ սոս-

կալի ամբոխի աղաղակներն աւելի ևս սաստկանում էին:

—Բարաբրային, Բարաբրային:

Յուդան ներս խուժեց ամբոխի մէջ, Այստեղ նա պատահեցաւ բարեկամներին, որոնք ողջունում էին նրան: մարդասպաններն ու անառակ կանայք յայտնում էին նրան իրանց մեծարանը: Երբ նա անցաւ առաջի շարքերի միջով և մօտեցաւ ապարանքի շէմքին, նա զգաց, որ իրեն ամեն կողմից շրջապատել և տիրել է ընդհանուր կատաղութեան սարսափելի փոթորիկը: Հաղարաւոր սրտերից գուրս էին թռչում միայն մի ձայն, մի գարհուրելի աղաղակ:

—Խաչիր նրան, խաչիր նրան:

Պիղատոսը տխուր ու յուղուած մտաւ Ըստեան, նրան ետեղ իւր չքախումբը: Միջանցքում մնաց միայն մի հարիւրապետ: Նա կանգնած էր երկու սիւների մէջ և հսկում էր ամբոխին: Նրա գէմու գէմ մի ծերունի օրինական վեհանձն շարժուածքով և տենդային արագութեամբ թերթում էր և մի տարօրինակ աղմուկով կարգում էր մեծ մարգարէների գըրուածքները: Ամբոխի կատաղութիւնն աստիճանաբար նատեց: Նա աղօտ կերպով զգում էր, որ ապարանքի ներսում տեղի է ունենում մի քստմնելի գործ: Յանկարծ քահանան տեսաւ

առաքեալին կարմիր թիկնոցի մէջ փաթաթուած. նա մի քանի խօսք փսփսաց հտրիւրապետին, որն իւր հերթում հայեացըն ուղղել էր Խոկարիովտացու վրայ. նրա դէմքը պարզ կերպով մի զգուելի արտայայտութիւն ստացաւ, և նա արագ հեռացաւ այնտեղից:

Այն ժամանակ բրօնզեայ ծանր դուռը դանդաղուէն և հանդիսաւոր կերպով բացուեցաւ. Պիղատոսը նորից երևեցաւ ծիրանագոյն սիւնազարդ սրաճի առաջ. փաղոցում տիրեց մեռելային լուսթիւն: Կիսազօտ ստուերի մէջ, տատանուելով, երկու զինուորի օգնութեամբ, արեան արտասուրի կայլակներով ողողուած, գլխին փշեայ պսակ դրած, եղեգը ձեռքին, ծիրանի քղամիդը հագած, ձեռքերը կապկապած կուրծքի վրայ, գնում էր Յիսուս՝ դիմելով դէպի Աստուծոյ ընտրեալ ժողովուրդիր:

Անխօս ամրոխը զարմացած նայում էր այդ մօտեցող արիւնաշաղախ խօլական երևոյթին: Յուղան սարսափահար երեսը դարձրեց: Պիղատոս առաջ անցնելով և ձեռքով.—որի վրայ փայլում էր այն մատանին, որ գործադրում էր կայսեր հրամանները կնքելու համար,—ցոյց տուեց նազովրեցուն և բարձր ձայնով արտասանեց.

— Ահա այրդ ցձեղ:

Եւ նորից թնդաց խաժամուխ ամրոխի զարհուրելի աղաղակը, էլ աւելի կատաղի, էլ աւելի հրամայական:

— Խաչիր նրան, խաչիր նրան: Մի քանի կանայք հեծկլում էին. մի անմիտը գրկել էր Տիբերիոսի արձանը և աղաղակում.

— Վայ նրան, վայ Եբուսաղէմին, վայ Աստծուն, վայ ինձ:

Հարիւրապետը կուսակալի պահապան զօրքի զլուխն անցնելով տիգովը կոպտութեամբ ցրուեց ամրոխը և այդ տիգուր թափորի համար ճանապարհ մաքրեց. Յուղան թագնուեցաւ իւր մօտ կանգնողների յետելը, որպէս զի Յիսուսի աշքերին չերեայ. բայց Պիղատոսի զօրականներից մինը խփեց նրան իւր սրով և ասաց.

— Դու ինչն համար ես եկել. ծաղրելու արգեօք չրէից Մարգարէի տանջանկները, թէք ուներկայութեամբ անպատուելու չուզմի մեծութիւնը: Մեր աստուածներն արհամարհում են դաւաճաններին: Հեռացիր այստեղից, որոնիր քեզ համար մի որեէ առանձնացած անկիւն, ուր կարողանաս թագնել դու քո նախատինքը:

Յուղան գնում էր ամրոխի միջով, որն ամեն կողմից շրջապատել էր հռովմայեցւոց պա-

հապան գօրքը։ Եյդ մարդկանցից շատերը, որ գեռ նոր Բարաբային էին պահանջում, հասկացան հարիւրապետի խօսքերը։ Յուղայի ականջին հասնում էին չնշին շշուկներ, որոնք լի էին ծաղրական նկատողութիւններով և ատելութեամբ։ Զգուշութեան համար նա դանդաղեցրեց իւր քայլերը և մտաւ մի խուլ փողոց։  
—Միթէ ամենքն էլ նայում են ինձ վրայ, որպէս մի ժանտախտով վարակուածի, —մտածեց նա։

Եյն ժամանակ նա վճռեց վերադառնալ տուն, խաղաղ կերպով խորհելու այնտեղ իւր ներկան և ապագան։ Բայց սպատահաբար հանդիպեցաւ մի խումբ կանանց և երիտասարդների, որոնց հայեացքները նրան շատ վախեցրին։ Նա ճանաշեց այն մանուկներին, որոնք երեք օր առաջ, Յիսուսի հանդիսաւոր կերպով երուսաղէմ մտնելու ժամանակ՝ ծաղիկներ և կանաչ ճիւղեր էին փռում ճանապարհի վրայ և երգում էին։

—Ովսաննա, Դաւթի Որդի, ողորմիր մեզ։ Ովսաննա։

Յուղան փռխեց իւր ընթացքը և գնաց դէպի քաղաքի ամրութիւնները։ Բայց մանուկները հետեւում էին նրան և անէծք ու նզովք թափում նրա դլխին։ Նա աւելի արագացրեց

իւր քայլերը, և զգում էր, որ մանուկները վազում են յետեից սպառնալից աղաղակներով։ Նա դուրս եկաւ շուկայի հրապարակը, ուր խրմբուած էին այդ առաւօտ Գալիլիայի գիւղերից եկած զիւղացիներն ու հովիւները։

—Յուղան, Յուղան... զոռում էին մանուկները։

—Յուղան, պատասխանեցին գալիլիացիք։

—Մահ Յուղային, սպանեցէք, սպանեցէք նրան։

Յուղան հաւարիտի իւր վերաբերուի ծալքերը՝ գլխակոր սկսեց փախչել տեղացող տարափի միջով, նրա յետեից չներին քըս էին տալիս։ Նա զգում էր, որ երկիրը խոյս էր տալիս իւր ոտքերի տակից, որ ինքը կըմեռնի զարհուրելի մահով և որ գլխաւորն է՝ նախրան այդ, իրենից կըխլեն իւր երեսուն արծաթը։ Յանկալի նա աշքերը բաց արաւ և երուսաղէմի լայն բացուած դռների առաջ տեսաւ իրեն։ Սաստիկ յուսահատութեան մէջ՝ նա մտաւ գոների կամարների տակը։ Հռովմայեցւոց պահապան զինուորները կարծելով, որ խռովարար ամրոխը վազում է դէպի Գողոթա՝ Հրէից Թագաւորին դահիճների ձեռքից ազատելու համար, իրենց տէգերն ուղղեցին դէպի ամրոխը և կանգնեցրին նրան։

Յուղան փախչում էր արեի լուսով ողող-  
ուած դաշտերի միջով։ Նա փախչում էր ապա-  
ռաժուած հովիտների միջով, հեղեղատների դաշ-  
տերով և բլուրների մերկ կատարներով։ Նա  
փախչում էր ըստ պատահման՝ մերթ ծովի ուղ-  
ղութեամբ, մերթ գէպի Տիբերիա, մերթ գէպի  
Սամարիա, մերթ գէպի Բեթղեհէմ, մերթ գէ-  
պի Սոգոմ։ Մի միտք, միայն մի զարհուրելի  
միտք պատել էր նրան, — նա կորած է։ Նրան՝  
կայսեր և Մովսէսի այդ հաւատարիմ ծառային  
հետնում են, որպէս կատաղած զազանի։ Ո՞ր-  
տեղ պիտի գտնէ մի ապահով անկիւն նոյն օր-  
ուայ համար։ որտեղ պէտք է թագնուի վազը,  
ամբողջ կեանքում։

Կէսօրին մօտիկ նա նստեց մի ժայռի ըստ-  
ուերի տակ և ուրախութեամբ նկատեց, որ չնայե-  
լով իւր այլքան երկար փախուստին, այնուա-  
մենայնիւ Երուսաղէմի շարագուշակ պատերն  
իրենից միայն մի քանի քայլ էին հեռու։ Ապա  
նա տեսաւ բլուրի գագաթի վրայ, քաղաքից  
շատ մօտիկ, հոռվմէական մի խումբ հեծելա-  
զօրք. աւելի հեռուն երկում էին խումբ-խումբ  
մարդիկ, կանայք, երեխայք, ամենքն էլ սպի  
մէջ, և ապա ժողովրդեան մի մեծ քաղմութիւն։  
Այդ այնպիսի մի տարօրինակ և անբացատրելի  
տեսարան էր, որին Յուղան նայում էր համար-

և անզգայաբար։ Բայց ահա տէզերից և սա-  
դաւարտներից աւելի բարձր, կատոյտ երկնա-  
կամարի ֆոնի վրայ գծադրում էին երեք խաչ,  
որոնցից իւրաքանչլւրի վրայից կախուած էր  
մի-մի մարդ զամուած ոտներով ու ձեռներով։  
Յուղան ճանաչեց Գողգոթան։ Ամենաբարձր  
խաչի վրայ, գլուխը խոնարհած, փշեայ պսակը  
գլխին մեռնում էր Յիսուս։ Եւ երբ հռովմայե-  
ցւոց հեծեալները վերադառնում էին յետ գէպի  
երուսաղէմ, մատնիշը չրէից Թագաւորի ստնե-  
րի տակ տեսաւ. մի ծնկաշը կին, իսկ Խաչի  
շուրջը աշակերտներին և մանուկներին, որոնք  
փռուած էին երեսն և վայր գետնի վրայ։

Այս տեսարանը փոքր ինչ մեղմեց նրա  
տանջանքները։ Եւ նա քաջալերուեց։ Պիղատոսը  
նրա փոխարէն վրէժինգիր էր եղել։ Նա յիշեց,  
որ շատ մարգարէներ էլ աւելի մեծամեծ հա-  
լածանքներ կրել են ժողովրդի կողմից, արհա-  
մարհանք՝ քահանաների կողմից, խստութիւններ՝  
մեծամեծների կողմից։ Մի քանիսները գէպի  
Աստուածային գործն ունեցած իրենց եռանդի  
համար մինչև անգամ թափել են իրենց արիւ-  
նը։ Նա կը հեռանայ չրէաստանից անարգուած  
ու նախատուած՝ բայց լիքը քսակով։ Եւ թի-  
կունքը դարձնելով գէպի Ապիրատ ծերակոյտը,  
Նա սկսեց քայլել Եթովպայի ուղղութեամբ։

Բայց յանկարծ երկնքի վրայ բարձրացաւ միւսաստիկ փոթորիկ, որ սահում էր ըլուրներին և հովիտների վրայով, արեգակի լոյսն ազօտացաւ, համարեա թէ հանգաւ. սեաթոյր ամպերն իջնում էին երուսաղէմի վրայ. կայծակը Խսկարիովտացուց մի քանի քայլ հեռու կտոր կտոր արեց ժայռը. խոկ այն կողմում, կայծակի ծիրանագոյն լուսաւորութեան տակ, թւում էր թէ երեք խաչեր բուսան և շարժում էին. թւում էր թէ երեք խաչեալները մօտենում էին դէպի մատնիչը, անթարիթ աչքերով արինաշաղախ ձեռքերը դէպ յառաջ պարզած:

Յուղան այդ սարսափից զլուխը կորցրած ընկաւ գետնի վրայ և փաթաթուեց վերարկուի մէջ:

—————

Նա մէկ էլ երեկոյեան բարձրացաւ տեկից. Ամբողջ աշխարհում թագաւորում էր մեռելային լուռթիւն: Նա չէր համարձակում նայել դէպի Գողգոթան: Բնութեան այդպիսի վեհլուռթիւնը վախեցնում էր նրան: Նա ցանկանում էր հանդիպել որ և է մարդու, լսել մարդկային ձայնի մի հնչիւն, նկատել մարդկային դէմքի վրայ գէթ կարեկցութեան մի նշոյլ: Նա վերադառնաւ երուսաղէմ յովնածութիւնից տանցուած և նստեց ճանապարհի կողքին:

Ճուտով կապոյտ երկնակամարի վրայ վառուեցին աստղերը և սպիտակագոյն ամպի թափանցիկ մշուշի միջով լուսինը տիսուր լուսով լուսաւորեց դաշտավայրը: Ճանապարհին քաղաքի կողմից լսուեցաւ զաւազանի մի թխկոց և յանկարծ երեկոյաւ ստուերը: Մի մարդ գէպ յառաջ թերուած՝ գնում էր շատ արագ, կարծես նա փախչում էր նզովրից: Անապատի կիսալուսոյ մէջ գծագրուեց նրա ձեռքը, որ փայտով մեծամեծ շարժումներ էր անում և արտայայտում էր յուսահատ վճռականութիւն: Ուղեորն անցաւ Յուղայի մօտով առանց կանգառնելու:

— Աղասիէր, բացականշեց Յուղան, Աղասիէր...

Մարդը ոչինչ չպատասխանեց և զնում էր աւելի արագ: Յուղան վագելով նրա յետիից սկսեց աղաշել:

— Աղասիէր, թոյլ տուր հետեւ քեզ: Ես ամեն տեղ կերթամ, որտեղ գու կըգնաս, որտեղ գու հանգստանաս, ես էլ այնտեղ կհանգստանամ: Ես քո ծառան կըդառնամ, քո զերին, քո հաւատարիմ շունը: Ինձ միայնակ մի թողնիր այս կէս գիշերին:

— Ես զնում եմ շատ հեռու, դէպի Ասոեատան, եղիպտոս, Ասիայի խորքերը, աշխար-

հի միւս ծայրը: Ես գնում եմ դէպի չոռվմ: Ես երբէք հանգստանալու չեմ, ես երբէք այլես չեմ քնելու: Ես Յիսուսին կարեկցութիւն ցոյց շտուի: Եւ ես պիտի տուժեմ իմ խստութիւնը յաւիտեան աննպատակ և անյօյս թափառելով: Բայց ինձ վրայ այս Արդարի արիւնը չկայ: Եւ նախազգուշացնում եմ քեզ, Յուղա, որ ես ոտքով կը ջախճախեմ ամեն մի իժի, որ կը հանդիպէ ինձ ճանապարհին:

Թափառականն անհետացաւ խաւարի մէջ: Յուղան դիտում էր, թէ ինչպէս անհետացաւ յաւիտենական հալածեալի ստուերը: Նա երկար ականջ էր գնում երկաթեայ գաւազանի հետզհետէ Յուլացող ձայնին: Յետոյ նա վախվախելով կրկին մօտեցաւ Երուսաղէմին: Նա գիտէր, որ քաղաքի պարսպի մօտ, խրամի յատակում կային մի քանի հիւղեր, ուր ապաստանում էին յանցաւորները և ողորմելի թըշուառները. թերես այդ հիւղերից մէկում նա գտնէր բարեկամ և ապաստարան մինչև արեգի ծագումը:



Դուների մէկի ճեղքուածքից թափանցում էր լոյսը: Յուղան ներս նայեց և ճանաչեց կրակի առաջ նստած չարագործին, որ սարսափի

էր բերել ամբողջ Հրէաստանը, այն աւազակին, որին Պիղատոսը յանձնեց ծովովրդին: Դա Բարաբրան էր: Յուղան բաղիսեց: Դուռը բացուեցաւ:

— Բարաբրան, ես յողնած եմ: Ես մրտում եմ, ես քաղցած եմ, ես զարհուրում եմ: Թողլ տուր ինձ այս գիշեր անցկացնել քո տանը: Աւազակը կանգնած էր իւր տան դրան մէջ: Նա ուսերը շարժեց և մի չարագուշակ ծիծաղով պատասխանեց.

— Գու կամենում ես անպատուել Բարաբրային: Եթէ ես ընդունեմ քեզ իրեն հիւր, վաղը երուսաղէմի մէջ իմ ազգն ինձ կը քարկոծէ: Ոչ: Լոյթը Յուղա, ես սպանել եմ հինգ՝ թէ վեց հրեայ և երկու հոռվուէկան հեծեալիներ, ես տաճարից քահանայալետի դրամարկոլից շատ ուկի եմ գողացել. ես կտրել եմ Տապանակուստի ոսկէ ձողը, որին դիմուշելու համար մահ է սպառնում, քայց ես երբէք մատնութիւն չեմ արել, ես երբէք զոհ չեմ տուել անողորմ դահճին: Ես աւելի շուշով կը խեղիմ քեզ իմ ձեռքերով, քան թէ թոյլ կը տամ քեզ մօտենալ իմ բնակարանի շէմքին: Եթէ քունդ տանում է — Գողգոթան այստեղից հեռու չէ. զու կարող ես այնտեղ հանգիստ քնել, դնելով գլուխդ քո Տիրոջ խաշին, և ոչ որ, նոյն իսկ սատանան

անդամ, այս զիշեր չի համարձակիլ վրդովել  
քեզ այնտեղ:

Եւ Յուղան հեռու քաշուեցաւ, մերթ թագ-  
նուելով ամրութիւնների պատերի տակ, մերթ  
անցնելով խաղողի և ձիթենու անտառների մի-  
ջով: Բարաբրայի անպատուելը նրա համար շատ  
ծանր հարուած էր:

Մինչև այժմ Յիսուսի Աստուածը Յուղայի  
դէմ հանել էր ազնիւ թշնամիներ, այն է Տա-  
ճարը, չոռվմը, աշակերտները, անիծեալ հրէ-  
ան, որ անցաւ մօտով,—այդ ամենի հետ գեռ  
և կարելի էր հաշտուել, բայց այդ մարդաս-  
պանը, որ վոնտեց իրեն իւր բնակարանից...  
Անպատութիւնը բաւական խիստ էր և զէնքը  
խիստ անարդ:

Եւ նրա ատելութիւնը գէպի նազովրեցին  
հրէշային ծաւալ ստացաւ: Իւր բոլոր նախա-  
տինքի միակ պատճառն այդ Խաշեցեալն էր:  
Նա միծ հաճոյք էր զգում, որ մատնեց նրան.  
և նա մի գիւտական ժպիտով մտաբերում էր այն  
բոլոր շարշարանքները, որոնց ինքը ականատես  
էր եղել: Նա սկսեց մին-մին մտաբերել՝ գա-  
նակոծութիւնից գոյացած վէրքերը, Պիղատոսի  
ծառաների ապտակները, փշեայ պսակի ծակ-  
ծկոցը, խաչի գամերը...

Այն ժամանակ մի դառն միտք պաշարեց

Նրան, որ ինքն այդ Մարտիրոսին, աշխարհի  
համար այնքան թանկագին անձնաւորութեան  
մատնել է ծերակրյտին շատ չնշին վարձով:  
—Նա արէէր առ նուազն 100 դենար,  
շընչաց Յուղան, քահանաները դառնապէս խա-  
քել են ինձ:

Նա սեղմած բռունցըներով սպառնաց եր-  
կընքին, որի վրայ պսպղում էին աստղերը:  
Նրան այրում էր ծարաւը և տենգը: Նա  
գիմեց գէպի ծառերի խումբը, յուսալով՝ որ  
նրանց հովանու տակ մի աղբիւր կըդտնէր: Քա-  
մին թեթեակի շարժում էր ծառերի տերեները:  
Յուղան փոքր ինչ թեթեութիւն զգաց: Յան-  
կարծ նա արձակեց խեղգուողի մի վայրենի ճիշ  
և ընկաւ ծնկների վրայ՝ կարծես մի աներևոյթ  
ձեռքի հարուածից: Նա ճանաշեց ձիթենի ծա-  
ռը, այդ այն ծառն էր, որի տակ անցեալ գի-  
շեր, սպառազէն դինուորների ներկայութեամբ,  
մահացու համբոյրը տուաւ Մարգոյ Որդուն:

Նա ծնկների վրայ դուրս սողաց Գեթսե-  
մանի պարտէզից և ապա սայթաքելով իւրա-  
քանչիւր քայլափոխում, սկսեց թափառել անա-  
պատում: Նա էլ ոչ մի բանի մասին չէր մտա-  
ծում: Նա ոչ մի բանի վրայ էլ յոյս չունէր,  
և նա ցանկանում էր պատահել միայն գահընկեց  
հրեշտակին, այն է՝ սատանային և իւր անսահ-

ման յուսահատութեամբ շարժել նրա գութը:  
Հեռուում, դաշտերի ընդարձակութեան մէջ  
թագնուած ջրամբարի վրայ՝ երկու արմաւենիւ  
տարածում էին իրանց ճկուն ճղները։ Այդ Յա-  
կովի ջրհորն էր, որի սուրբ ջրերը սրբազոր-  
ծուած էին Յիսուսի լոկ խօսքով։ Յուղան ան-  
դօր էր իրենից հեռու վաներու այդ վիճ յիշա-  
տակութիւնը։ Նա մեծ գժուարութեամբ չորեց  
ջրհորի ափին։ Դոյլ չկար կախուած շղթայից,  
ուստի կուացաւ, որպէս զի իւր տապից ար-  
րուղ երեսը դովացնէ ջրի սառնութեամբ։

—∞—

Արմաւենիների միջով, որպէս մի թեթե-  
երնոյթ, երեսցաւ մի մատաղահաս կոյս, ամ-  
բողջապէս սպիտակ հազած և սպիտակ ծղար-  
շով գլուխը ծածկած։ մի փափկասուն և նազե-  
լի օրիորդ, որ իւր հոլանի ձեռքով աջ ուսի  
վրայ բռնած ունէր կաւէ սափոր։ Յուղան բարձ-  
րացրեց իւր բորբոքուած երեսը և հազիւ լսելի  
ձանով արտասանեց։

—Ես ծարաւի եմ.

Դեռահաս կոյսը դողդողաց երկիւղից, կար-  
ծես թէ իւր առաջ տեսաւ նա մի ամենի գաղան։  
—Ես ծարաւի եմ, կրկնեց Յուղան։  
—Նա և՛ Մարգարէն, որին դու մատնե-

ցիր, խաչի վրայից բացականչեց՝ «Ես ծարաւի  
եմ»։ Իսկ հոռովմայեցիները բացախով լի սպոնդն  
անցրին տէզի սուր ծայրը և տուին նրան։  
Օրիորդը սափորը կախեց ջրհորը և դուրս  
հանեց այնտեղից մաքուր ջրով լցրած, որի կա-  
թիները վայր ընկնելիս ցոլում էին որպէս  
թանկապին բիւրեղներ։

Յուղան լուռ էր, նա դողդողում էր այդ  
մանկան ներկայութեանը։ Նրա տապացած շր-  
թունքները ձգում էին դէպի զովացուցիչ ջուրը։  
Այդ կոյսը, որ իւր անձայն թախիծի մէջ  
աւելիս շընազ էր երեսում, խոնարհեցաւ դէ-  
պի Յուղան։

—Առ, ասաց նա, Յիսուսի սիրոյ համար  
առ և խմիր։

Եւ Յուղայի խմելուց յետոյ՝ կոյսը սափորը  
նորից դրեց իւր աջ ուսին և հեռացաւ ամբող-  
ջովին սպիտակ, կարծես լուսաւորուած լինէր  
աստղերի ախորժելի լուսով։


Այդ իսկ վայրկեանին Յուղայի խաւարա-  
մած հոգու մէջ ներս թափանցեց լուսոյ մի  
ալիք։ Նա բոպէապէս չափեց իւր անկման և  
իւր եղեռնագործութեան ամբողջ վիճը։ Այդ մի  
անակնկալ և սպանիչ ցնցումն էր իւր գիտակ-  
ցութեան համար։ Դեռահաս կոյսի հեղութիւնը  
բաց արաւ նրան այն գաղտնիքը, որին նա եր-

բէր չէր հաւատում, և այն միտքը, թէ նա  
անպատռել է Աստծուն, սարսափով լցնում էր  
նրա սիրաը:

—Ո՞վ է Այն խաշեալը, ասաց նա, Որն  
այդ մանուկի ձեռքով ողորմածութեան բալա-  
սանը կաթեցրեց իմ զլխին:

Նա երկար նստեց Յակովի ջրհորի ափին:  
Այդ մի և նոյն միտքը նրան ոչ մի միսիթա-  
րութիւն չէր բերում, այլ ընդհակառակն՝ նրան  
անսահման տանջանք էր պատճառում։ Ուղղա-  
կի նրա դէմուգէմ, բլրակի վրայ մի չորացած  
թղենի կար, և տիրոջ այլաբանական առակը  
աղօտ կերպով պատկերացաւ նրա յիշողութեան  
մէջ։ Յանկարծակի վազեց նա դէպի ծառը,  
գետնի վրայ ձգեց իւր կարմիր վերարկուն,  
թափեց նրա վրայ իւր երեսուն արծաթը, և  
արձակելով իւր գօտին՝ կախուեց անպտուղ թղե-  
նու ամենահաստ ճիւղից։

Մ'եռած առաքեալի ոտների տակ վերար-  
կուն երեսում էր որպէս մի մեծ արեան բիծ։  
Ճագարը պառկեց նրա վրայ և քնեց մինչև  
առաւօտեան արշալոյսը։ Երբ հասաւ տխուր  
առաւօտը, մի ահագին ուրուր իւր կարմրերանդ  
թերով երկնքում շատ բարձր չարագուշակ ծա-  
ռի զլխին սկսեց պտոյտներ անել...



x54  
~~1096~~

ՀՀ Ազգային գրադարան



NL0167093

